ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՕՆԱՆՅԱՆ ԱՆՆԱ ՍԵՐԳԵՅԻ**

# ՍԿԻՀԻ ԾԱԾԿՈՑՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԶԱՐԴԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԷ.00.03 – «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ – 2023

---

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

**ОНАНЯН АННА СЕРГЕЕВНА**

# ИКОНОГРАФИЧЕСКИЕ И ОРНАМЕНТАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ПОКРОВОВ

**АВТОРЕФЕРАТ**

диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности
17.00.03 – “Изобразительное искусство, декоративно-прикладное искусство, дизайн”

ЕРЕВАН – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
**ՉՈՒԳԱՍԶՅԱՆ Լևոն Բաբկենի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
**ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն Հովհաննեսի**
արվեստագիտության թեկնածու
**ԹԱՌԱՅԱՆ Զեփյուռ Ռուբենի**

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա

Պաշտպանությունը կայանալու է 2023թ. դեկտեմբերի 7-ին, ժամը՝ 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ. հոկտեմբերի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

**Ասատրյան Ա.Գ.**

---

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель – доктор искусствоведения, профессор
**ЧУГАСЗЯН Левон Бабкенович**

Официальные оппоненты – член-корреспондент НАН РА,
доктор искусствоведения, профессор
**КАЗАРЯН Виген Оганесович**
кандидат искусствоведения
**ТАРАЯН Зепюр Рубеновна**

Ведущая организация – Государственная академия художеств Армении

Защита диссертации состоится 7-го декабря 2023г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: Ереван, 0019, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 23-го октября 2023г.

Ученый секретарь специализированного совета,
доктор искусствоведения, профессор

**Асатрян А.Г.**

## Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

**Թեմայի արդիականությունը:** Սկիհի ծածկոցները կիրառվում են եկեղեցում՝ Պատարագի ժամանակ և համարվում են եկեղեցական գույք: Բացի այդ, սկիհի ծածկոցները հարդարված են ավետարանական սյուժեներով, կրոնական խորհրդանշաններով, սրբերի և հրեշտակների պատկերներով, բուսաձաղկային պատկերներով, ինչը բնորոշ էր հայ միջնադարյան արվեստի ճյուղերին՝ քանդակագործություն, մանրանկարչություն, որմնանկարչություն, կիրառական արվեստ և այլն: Այսպիսով, հարդարանքի պատկերագրական թեմաները սկիհի ծածկոցները հայ արվեստի անքակտելի մաս են դարձնում: Հաջորդ կարևոր հատկանիշը այս ծածկոցների հարդարանքի ձևն է՝ ասեղնագործությունը թելերով, մետաղական հավելումներով և քարերով: Ուստի ծածկոցները նաև դեկորատիվ-կիրառական արվեստի մասն են: Մյուս կարևոր առանձնահատկությունը ծածկոցների արձանագրություններն են, որոնք պարունակում են անուններ, ազգանուններ կամ ազգանվանը փոխարինող մակդիրներ, եկեղեցիների ու վանքերի, գյուղերի և քաղաքների անուններ: Արձանագրությունները կարող են տեղեկություններ հաղորդել արդեն գոյություն չունեցող բնակավայրերիի և եկեղեցիների մասին: Արձանագրություններից հայտնի է դառնում նաև, որ դրանք նվիրվել են եկեղեցուն՝ նվիրաբերողի ընտանիքի անդամների հոգու փրկության համար:

Այսպիսով, ուսումնասիրելով սկիհի ծածկոցների *պատկերագրական* և *զարդային* առանձնահատկությունները, միաժամանակ ուսումնասիրելու ենք այդ ծածկոցների ծագումը և կիրառությունը որպես *եկեղեցական գույք*, դրանց հիմնական գործառույթները, *խորհրդաբանությունը*, *արձանագրությունների* բովանդակությունը և տեսակները, ասեղնագործության *նյութերը* և *տեսակները:* Այս ուսումնասիրությունը միաժամանակ առնչվում է կրոնին և հավատքին, պատկերագրությանը, ասեղնագործությանը:

**Հետազոտության նպատակն է** արվեստաբանական վերլուծության ենթարկել հայ առաքելական եկեղեցու սկիհի ծածկոցների ընդհանուր հարդարանքը, մասնավորապես պատկերագրությունը: Այստեղից էլ բխում են հետազոտության հետևյալ **խնդիրները.**

1. Ուսումնասիրել սկիհի ծածկոցների առաջացումը և առանձնացումը եկեղեցական մյուս գործվածքներից,
2. Անցկացնել համեմատական ուղղափառ և կաթոլիկ եկեղեցու ծածկոցների հետ,
3. Խմբավորել սկիհի ծածկոցները ըստ ստեղծման կամ նվիրաբերման վայրի,
4. Քննության առնել սկիհի ծածկոցների պատկերագրությունն ըստ բովանդակության,
5. Նկարագրել ասեղնագործված սյուժեներն առանձին-առանձին, ցույց տալ դրանց ազդեցության աղբյուրը,

6. Գտնել պատկերագրական սյուժեների և զարդանախշերի կապը սկիհի ծածկոցների խորհրդաբանության և կիրառության հետ,
7. Կարդալ և վերծանել արձանագրությունները, դրանց միջոցով հասկանալ նվիրատվության նպատակը,
8. Ուսումնասիրել ծածկոցների գործվածքները, թելերի և զարդերի տեսակները,
9. Ծածկոցները դիտարկել որպես դեկորատիվ կիրառական արվեստի նմուշ մի կողմից, իսկ մյուս կողմից որպես եկեղեցու ծիսակարգի (մասնավորապես սուրբ Պատարագի) անբաժան մաս:

**Թեմայի մշակվածության աստիճանը:** Սկիհի ծածկոցների վերաբերյալ առանձին հետազոտություն չկա: Իրենց տարբեր աշխատանքներում մի քանի հայագետ-հետազոտողներ ներկայացրել են որոշ նմուշներ:

*Գարեգին Հովսեփյանը,* լինելով արվեստաբան, հնագետ, մշակութային և հոգևոր գործիչ, իր հոդվածներում նկարագրել է մի քանի սկիհի ծածկոցներ: 1950թ. Բեյրութի «Պայքար» տարեգրքում հրատարակված «Մանր արվեստի օրինակներ Երուսաղեմի վանքից» հոդվածում Հովսեփյանը նկարագրում է սկիհի 3 ծածկոցներ: Գ. Հովսեփյանի այդ և մյուս ուսումնասիրությունները հետագայում լույս տեսան երկու հատորով[1]: Հովսեփյանը վերծանել է ծածկոցների արձանագրությունները, համեմատել ոճական նմանություն ունեցող վարագույրների հետ, կատարել արվեստաբանական և պատկերագրական վերլուծություն:

Մյուս ուսումնասիրողը *Սերիկ Դավթյանն է*: Նա մեծ ազգագրագետ էր, ուսումնասիրում էր ասեղնագործություն: 1963թ. պաշտպանել է «Հայկական ասեղնագործության արվեստի պատմությունից» թեմայով ատենախոսություն: Դավթյանը 1961թ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագրի ԺԲ համարում հրատարակած «Հայկական ասեղնագործության մասին» հոդվածում նկարագրում է Ղրիմի միակ հայկական եկեղեցում պահվող սկիհի ծածկոցը[2]: 1972թ. հրատարակված «Հայկական ասեղնագործություն» գրքում Դավթյանը ասեղնագործ իրերը ներկայացնում է աշխարհագրական տարածքներով: Նա հիշատակում է մի քանի սկիհի ծածկոցներ՝ Վան-Վասպուրականի, Արարատյան, Տրապիզոնի դպրոցներից[3]: 1981թ. հրատարակված «Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության» գրքում դարձյալ սկիհի ծածկոցների նկարագրություն կա՝

---

[1] **Հովսեփյան Գ.,** Հայ արվեստի օրինակներ Երուսաղեմի վանքից, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, հ. Բ, էջ 252-260:

[2] **Դավթյան Ս.,** Հայկական ասեղնագործության մասին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր, 1961, Հ. 12, էջ 79-84:

[3] **Դավթյան Ս.,** Հայկական ասեղնագործություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 18, 39, 61:

օգտագործված նյութերը, կատարման տեխնիկան, ասեղնագործության տեսակը: Դավթյանը նկարագրում է Էջմիածնում պահվող մի քանի ծածկոցներ, մանրամասն ներկայացնում է Վարագա վանքից բերված նմուշը և դրա հարդարանքը[4]: Դավթյանը նկարագրել է ծածկոցների ասեղնագործությունը, սակայն պատկերագրական քննություն չի կատարել:

Արվեստաբան *Մանյա Ղազարյանը*, ով կազմել է տարբեր հայկական գանձարանների կատալոգներ, աշխատել է Էջմիածնի գանձատանը, «Էջմիածին» հանդեսի 1987թ. Բ-Գ, Թ-Ժ, ԺԱ-ԺԲ համարներում ներկայացրել է Էջմիածնի Ալեք և Մարի Մանուկյանների գանձատուն թանգարանում պահվող հայ արվեստի գանձերը, նկարագրել է մի քանի սկիհի ծածկոցներ, որոնք այդ պահին Էջմիածնում էին: 1993թ. Անթիլիասում լույս տեսած «Արցախի արուեստի գանձերը» գրքում մի քանի էջով տվել է հայկական ասեղնագործության բնութագիրը և հավելվածում ներկայացրել Արցախում ստեղծված և Էջմիածնի Ալեք և Մարի Մանուկյանների գանձատուն թանգարանում պահվող երկու սկիհի ծածկոց[5]:

Մյուս ուսումնասիրությունները տարբեր թանգարանների և մասնավոր հավաքածուների, դրանց ցուցահանդեսների կատալոգներն են, տարբեր պատկերագրքեր: Հունաստանի Թեսալոնիկ քաղաքի Բյուզանդական մշակույթի թանգարանում Գալֆյան հավաքածուի «Հայ արվեստի ոլորտներ» խորագիրը կրող ցուցադրության կատալոգում ներկայացված են 3 սկիհի ծածկոցների լուսանկարներ և կարճ նկարագիր[6]: Արգամ Այվազյանը 2013թ. Երևանում հրատարակած «Մշակութային արժէքների Գալֆեան հաւաքածոյի արձանագիր իրերը», ապա 2016թ. հրատարակած «Գալֆյան հավաքածոյի մշակութային արժեքներ, Պրակ IV, Հայկական կիրառական արվեստի XVI-XIX դդ. մետաղյա իրեր և գործվածքներ» գրքերում ներկայացրել է այս հավաքածուին պատկանող արձանագրություն ունեցող 5 և առանց գրությունների՝ 3 ծածկոցների լուսանկարներ և հակիրճ նկարագրություն[7]:

«Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների» գրքի պրակ 1-ում՝ «Հայերեն արձանագրությամբ առարկաներ», 1964թ., Եվգինե

---

[4] **Դավթյան Ս.,** Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 78:

[5] **Ղազարյան Մ.,** Արցախի արուեստի գանձերը, Անթիլիաս, Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի արուեստի ինստիտուտ, Հայաստանի պատմութեան և մշակույթի յուշարձանների պաշտպանութեան վարչութիւն, 1993, էջ 94:

[6] Aspects of Armenian Art: The Kalfayan collection, Temporary Exhibition, Museum of Byzantine Culture, Thessaloniki, Athens, 2010, pp. 62-65.

[7] **Այվազեան Ա.,** Մշակութային արժէքների Գալֆեան հաւաքածոյի արձանագիր իրերը, Երևան, Հեղինակային հրատ., 2013, էջ 160-170, տե՛ս նաև **Այվազյան Ա.,** Գալֆյան հավաքածոյի մշակութային արժեքներ, Պրակ IV, Հայկական կիրառական արվեստի XVI-XIX դդ. մետաղյա իրեր և գործվածքներ, Երևան, Հեղինակային հրատ., 2016, էջ 50-65:

Մուշեղյանը ներկայացրել է Հայաստանի պատմության թանգարանի արձանագիր իրերը, այդ թվում սկիհի ծածկոցների արձանագրությունները[8]:

Մինեսոթայի Դուլութի համալսարանի պրոֆեսոր Ռոնալդ Մարչեզը և Կալիֆորնիայի Արևմտյան Միչիգանի համալսարանի պրոֆեսոր Մաոլեն Բրոն տարիներ շարունակ համատեղ ուսումնասիրել են Կոստանդնուպոլսի հայկական եկեղեցիներում պահվող գանձերը: Բազմաթիվ հոդվածներ են հրատարակել, իսկ 2010 թվականին «Splendor & pageantry: Textile treasures from the Armenian Orthodox churches of Istanbul» գրքում ամբողջացրել են Ստամբուլի հայկական եկեղեցիներում, մասնավոր հավաքածուներում պահվող գործվածքը, այդ թվում՝ սկիհի ծածկոցների պատկերագրությունը, ասեղնագործության նյութերն ու տեսակները՝ թվով 8 ծածկոց [9]:

Տարբեր ցուցահանդեսների կատալոգներում և պաշտոնական կայքէջերում հրատարակվել են Հայաստանի պատմության թանգարանում, Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանում, Էջմիածնի Ալեք և Մարի Մանուկյանների գանձատուն թանգարանում, Սարդարապատի հուշահամալիրի Հայոց ազգագրության թանգարանում, Լուսիկ Ագուլեցու տուն-թանգարանում, Պոլսի Պատրիարքարանում, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում, Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության թանգարանում, Ռումինիայի Հայոց Պատրիարքարանին կից Դուդյան թանգարանում, Վիկտորիայի և Ալբերտի թանգարանում, Հարվարդի համալսարանի թանգարանում, Գրիգոր Մարգարյանի, Զարեհ Պտուկյանի, Աշճյանների, Գալֆյանների և այլ մասնավոր հավաքածուներում պահվող հայկական ծագում ունեցող տարբեր սկիհի ծածկոցներ:

**Աշխատանքի գիտական նորույթը**: Աշխատանքի մեջ առաջին անգամ՝

- արվեստաբանական վերլուծության ենք ենթարկել դեկորատիվ-կիրառական արվեստի մաս կազմող սկիհի ծածկոցների պատկերագրությունը:
- Հայաստանի և տարբեր երկրների թանգարաններից և մասնավոր հավաքածուներից, հրատարակված գրքերից և կատալոգներից գտել և ցուցակագրել ենք հարյուրից ավել սկիհի ծածկոց:
- Գրավոր աղբյուրների միջոցով ուսումնասիրել ենք սկիհի ծածկոցների առաջացման պատմությունը Հայաստանում, այդ ծածկոցների գործառույթները և նշանակությունը որպես ծիսական գույք:

---

[8] **Մուշեղյան Ե.,** Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, Պրակ 1, Հայերեն արձանագրությամբ առարկաներ, Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1964, էջ 106, 110, 113, 122, 125:

[9] **Marchese R., Breu M.,** Splendor & pageantry: Textile treasures from the Armenian Orthodox churches of Istanbul, Armenian Patriarchate of Istanbul, Istanbul, Citlembik Film Video Yapim Ceviri, 2010, pp. 245, 330-349.

- Հայաստանի և արտերկրի միջնադարյան հուշարձանների քննությամբ ուսումնասիրել ենք ծածկոցների պատկերների առկայությունը, որոնք հնարավորություն կտային պատկերացնելու, թե հատկապես որ դարից են դրանք օգտագործվել որպես առանձին միավոր:
- Ուսումնասիրել ենք կաթոլիկ և ուղղափառ եկեղեցու համանման նյութը, արել համեմատություն: Քննության ենք առել հայկական սկիհի ծածկոցների նախօրինակ հանդիսացող բյուզանդական ծածկոցները, դրանց պատկերագրությունը:
- Հավաքված նյութը բաժանել ենք աշխարհագրական խմբերի՝ ըստ ստեղծման կամ նվիրաբերման վայրի, հիմք ընդունելով դրանց արձանագրությունները: Արձանագրություն կամ թանգարանում հստակ տեղեկություններ չունեցող նմուշները խմբավորել ենք առանձին:

Հետազոտության ընթացքում կիրառվել է արվեստաբանական վերլուծության համալիր մեթոդը, մասնավորապես՝ նկարագրական, ոճական, պատկերագրական, պատկերաբանական, տեխնիկա-տեխնոլոգիական նաև հարակից գիտությունների մեթոդները:

**Ատենախոսության գործնական նշանակությունը:** Ատենախոսության մեջ ընդգրկված են սկիհի ծածկոցների մի չնչին մասը: Բազմաթիվ նմուշներ մեզ չեն հասել կամ ներկայումս մատչելի չեն մեզ, քանի որ ցրված են Հայաստանի և արտերկրի զանազան թանգարանային և մասնավոր հավաքածուներում: Այս ատենախոսությունը կարող է յուրահատուկ ուղեցույց դառնալ եկեղեցական գործվածքի մյուս տեսակների պատկերագրությամբ զբաղվող արվեստաբանների և այլ հետազոտողների համար:

**Աշխատանքի փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի 2022թ. նոյեմբերի 3-ի N 6 նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», «Էջմիածին», «Բանբեր Մատենադարանի», «Հայկազեան հայագիտական հանդէս», «Բանբեր հայագիտության» գիտական պարբերականներում տպագրված հոդվածներում, զեկուցվել են Մատենադարանի՝ Գևորգ Աբգարյանի ծննդյան 100-ամյակին նվիրված երիտասարդական վեցերորդ և Արտաշես Մաթևոսյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ութերորդ նստաշրջաններում:

**Աշխատության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից («Եկեղեցական ծիսական ծածկոցների տեսակները և կիրառությունը», «Հայաստանում ստեղծված սկիհի ծածկոցներ», «Հայկական գաղթավայրերում ստեղծված սկիհի ծածկոցներ», «Անհայտ ծագման սկիհի ծածկոցներ», «Արձանագրությունները, ասեղնագործության նյութերը և տեսակները»), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և վերատպություններից կազմված հավելվածից:

## Ատենախոսության բովանդակությունը

## ԳԼՈՒԽ 1

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ԾԱԾԿՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

### 1.1 Եկեղեցական գործվածքների տեսակները

Աշխատանքի առաջին գլուխը նվիրված է եկեղեցական ծիսական ծածկոցների տեսակներին, դրանց ծագմանը: Սկիհի ծածկոցների առաջացման վերաբերյալ կան մի քանի աղբյուրներ: Առաջինը գրավոր հիշատակություններն են՝ Պատարագամատույցները, Մաշտոցները, որոնք պատարագի բովանդակության և անցկացման կարգի մասին հիմնական աղբյուրն էին: Մյուսն արվեստի տարբեր հուշարձաններում առկա ծածկոցների պատկերներն են, որոնք դրանց կիրառման խոսուն վկաներն են: Եվ ուսումնասիրման երրորդ աղբյուրը պահպանված օրինակներն են:

Եկեղեցում ասեղնագործ գործվածքների կիրառումը ունի **բյուզանդական** ծագում: Դրանք տարբեր անոթներ կամ մասունքներ ծածկելու համար էին կամ պարզապես օգտագործվում էին որպես եկեղեցու ներքին հարդարանքի միջոց՝ կախվում էին պատերից, սյուներից և այլն: Ասեղնագործ գործվածքի կիրառումը նորույթ չէր քրիստոնեական աշխարհում: Քրիստոնեական թեմաներով վաղ շրջանի գործվածքները ղպտական են՝ Զ. դար: Դրանք գտնվել են Սաքքարայից, Ֆայումից, Ախմիմից, Անտինոյեից: Ղպտական գործվածքների խոշոր հավաքածուներ կան Լուվրում, Էրմիտաժում, Ղպտական թանգարանում:

### 1.2 Սկիհի ծածկոցների վաղագույն օրինակները և պատկերագրական տեսակի ձևավորումը

Բյուզանդական շրջանում ծածկոցները կիրառվում էին սկիհը և մաղզման ծածկելու համար: Այս շրջանի ծածկոցների հարդարանքի հիմնական թեման առաքյալների հաղորդությունն էր: Այս թեմայի խորհուրդը Վերջին Ընթրիքն էր, որը նորույթ չէր բյուզանդական պատկերագրության մեջ և գոյություն ուներ մինչ ասեղնագործ ծածկոցների ի հայտ գալը: Ասեղնագործ նմուշների ի հայտ գալը կապում են Պալեոլոգոսյան դինաստիայի հետ: Բյուզանդական ծածկոցների վաղագույն օրինակները Գերմանիայի Հալբերշտադտ քաղաքի տաճարի զույգ ծածկոցներն են՝ հունարեն արձանագրությամբ և Հաղորդության տեսարանով: Դրանք Հալբերշտադտ են բերվել 4-րդ խաչակրաց արշավանքից և նվիրաբերվել տաճարին 1208 թվականին: Ենթադրվում է, որ Կրոսիղն (Krosigk) է նվիրաբերել տաճարին:

Ծածկոցները սև մետաքսե կտորից են, երկուսի դեպքում էլ Քրիստոսին ձախ կողմից մոտենում են վեցական առաքյալներ: Երկուսն էլ արձանագիր են:

Բյուզանդական վաղ շրջանի այս ծածկոցների հարդարանքը դարձավ մյուս քրիստոնյա երկրների սկիհի ծածկոցների պատկերագրական նախատիպը:

Ռուսական պահպանված հնագույն օրինակը թվագրվում է ԺԴ. դարով՝ 1389թ., պահվում է Ռուսաստանի պատմության պետական թանգարանում: Չափերով բավականին մեծ է՝ 123x221 սմ: Ոսկեգույն կտորի վրա կենտրոնում ասեղնագործված է Քրիստոսը, կողքին աղոթողի դիրքով՝ ձախից Տիրամայրը, Միքայել հրեշտակապետը, միտրոպոլիտներ Պետրոսն ու Ալեքսեյը, իսկ աջից՝ Հովհաննես Մկրտիչը, Գաբրիել հրեշտակապետը, միտրոպոլիտներ Մաքսիմն ու Ֆեոգնոստը: Ներքևում պաշտոնյաներ են ասեղնագործված, վերևում չորս սերովբեներ, եզրագոտում՝ հրեշտակներն ու հրեշտակապետերը, անկյուններում՝ ավետարանիչները: Օգտագործված են ոսկեթել և արծաթաթել, մետաքսաթելեր: Ունի արձանագրություն այն մասին, որ իրն ասեղնագործվել է իշխանուհի Մարիա Սեմյոնովնայի պատվերով 1389 թվականին:

Կարելի է եզրակացնել, որ ուղղափառ եկեղեցիների ծածկոցներն ավելի մեծ էին, հետևաբար պատկերներն ավելի շատ էին, քան բյուզանդական օրինակներում: Ծածկոցների պահպանված նմուշներից բացի դրանց մասին պատկերացում կազմելու հարցում անփոխարինելի են ծածկոցների պատկերները արվեստի հուշարձաններում:

Սկիհի ծածկոցի պատկեր առաջին անգամ կարելի է տեսնել Կիևի սուրբ Միքայել հրեշտակապետի եկեղեցու խճանկարներում (1108-1112թթ.): Աբսիդում պատկերված է եղել Հաղորդության տեսարանը, որի մաս կազմող առաքյալները և սրբերը եղել են ազատ դիրքով, ճոխ հագուստներով: Խճանկարի այս հատվածը վերականգնվել է և տեղափոխվել է Սուրբ Սոֆիայի տաճար, իսկ մյուս տեսարանները՝ Էրմիտաժ և Տրետյակովյան պատկերասրահ: Տեղական և կոստանդնուպոլսյան դպրոցի վարպետների համատեղ աշխատանք է: Պողոսին հաղորդություն տվող Քրիստոսի ձեռքին սկիհ է, որի վրայից հանված ծածկոցն ունի հարուստ զարդային հարդարանք: Ծածկոցը ոսկեթելով ասեղնագործված կանաչ գործվածք է:

### 1.3 Հայ առաքելական եկեղեցում կիրառվող ծածկոցները

Գործվածքի մասին հիշատակություններ կան պատմիչների մոտ՝ Եղիշե, Մովսես Խորենացի, Քսենոփոն, սակայն եկեղեցուն առնչվող գործվածքի մասին, հիշատակություն ունի Կիրակոս Գանձակեցին (ապրել է ԺԳ. դարում): Նա գրում էր, որ Նոր Գետիկ (Գոշավանք) վանքի օծման հանդիսությունների ժամանակ (1197թ.) հաթերքցի Վախթանգ իշխանի կինը «...իր դուստրերի հետ պատրաստեց գեղեցիկ վարագույր, սուրբ խորանի ծածկույթ, որը հիացնում էր տեսնողներին. պատրաստված էր այծերի շատ փափուկ աղվամազից, ներկված էր պես-պես ու գույնզգույն, գործված էր քանդակաձև ու նկարված էր պատկերներով՝ փրկչի մարդեղության ու այլ սրբերի ճշգրտագույն (նկարի)

ընդօրինակությամբ, որը հիացնում էր տեսնողներին…», «…նա ոչ միայն այս եկեղեցու համար ծածկույթ պատրաստեց, այլև ուրիշ եկեղեցիների՝ Հաղպատի, Մակարավանքի ու Դադի վանքի, որովհետև այդ բարեպաշտ կինը չափազանց սիրում էր եկեղեցիները…»[10]:

Հայ առաքելական եկեղեցում օգտագործվող ծիսական ծածկոցները ունեն տարբեր գործառույթներ:

**Մարմնակալ** (նաև **Գորփուրա,** բայց այս բառը կիրառություն չունի), դրվում է սկիհի տակ: Օգտագործվում է և՛ առաքելական, և՛ կաթոլիկ, և՛ ուղղափառ եկեղեցիներում:

**Շուշփա**, բռնիչ կամ բշխուն՝ Խաչ, Ավետարան կամ սկիհ բռնելու համար: Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ այն կարող էր փոխարինել տարբեր ծածկոցների և ավելի լայն կիրառություն ուներ:

**Դաստառակ,** բառի վերլուծությունից գուցե ենթադրեինք, որ պահում էին ձեռքում, սրբում ձեռքերը: Սակայն դաստառակները կիրառվում էին սեղան ծածկելու, սկիհը ծածկելու, ձեռքերը սրբելու, ավետարանի տակ դնելու համար:

Հաշվի առնելով կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների պատարագների տարբերությունը, նկատենք, որ ծիսական ծածկոցները ևս տարբերվում են: Կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիներում սկիհը ծածկվում է առանձին, մաղզման՝ առանձին, հետո միայն մեկ ընդհանուր, չափերով ավելի մեծ ծածկոցով:

**Սկիհի փոքր չափի ծածկոցը** (անգլերեն՝ purificator) օգտագործվում է կաթոլիկ եկեղեցում: Չունի ծիսական նշանակություն, այլ միայն ֆունկցիոնալ: Որպես կանոն ուղղանկյուն կամ քառակուսի է: Այն սկիհի վրա է դրվում Հաղորդությունից հետո, որպեսզի մաքրի գինու հետքերը, ապա այդ ծածկոցի վրա դրվում է մաղզման: Ուղղափառ եկեղեցում մաղզման չափերով մեծ է, այն նույնպես պատվանդան ունի, ինչպես սկիհը և առանձին է ծածկվում, ուստի վերոնշյալ ծածկոցի տեսակը չի օգտագործում:

**Սկիհի միջին չափի ծածկոցը** (անգլերեն՝ Pall) բնորոշ է կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիներին: Այն ունեցել է պաշտպանիչ նշանակություն: Հատկապես արևելյան երկրներում գինին ճանճերից ու փոշուց պաշտպանելու համար սկիհը ծածկում էին փոքր չափի գործվածքով: Հետագայում ձեռք է բերել ծիսական նշանակություն և ծածկել է սկիհը Հաղորդության ժամանակ:

Հայ առաքելական եկեղեցին վերոնշյալ երկու ծածկոցները չի կիրառում, այլ սկիհը և մաղզման ծածկում է մեկ **ընդհանուր մեծ ծածկոցով,** որը նույնական է Կաթոլիկ և Ուղղափառ եկեղեցում կիրառվող աեռների հետ: Մեզ հայտնի պահպանված վաղագույն հայկական օրինակը 1688թ. Էջմիածնի Ալեք և Մարի Մանուկյանների գանձատուն թանգարանում պահվող, ոսկեթել ասեղնագործությամբ, արծանագրությամբ նմուշն է: Հստակ չէ, թե սկիհի

---

[10] **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, «Սովետական Գրող», 1982, էջ 157:

ծածկոցները երբվանից են օգտագործվել որպես սրբազան իր: Հստակ է, որ նախ կիրառական նշանակություն են ունեցել, ապա հետագայում օրինվել են, ինչպես եկեղեցում օգտագործված սպասքն էր ընդունված օրինել:

**Հայաստանի միջնադարյան հուշարձաններում** հանդիպում են, եկեղեցական ծածկոցների, այդ թվում սկիհի ծածկոցների պատկերներ:

Նախ դրանք հանդիպում են հայ միջնադարյան ձեռագրարվեստում: Դրանցից առաջինը կարելի է տեսնել գրիչ Հովհաննես Սանդղկավանեցու 1053թ. ավետարանի Ժ խորանում (Մատենադարան, համար 3793): Սկիհը ծածկված է երկնագույն ուղղանկյուն ծածկոցով, որի կենտրոնում հավասարաթև խաչի պատկեր կա, բացի այդ, հարդարված են նաև ծածկոցի եզրերը: Մեկ այլ պատկեր տեսնում ենք Հռոմկլայում գրված, 1262թ. Թորոս Ռոսլինի նկարազարդած ավետարանում, որը պահվում է Բալթիմորի Ուոլթերս պատկերասրահում: 11ա խորանում 2 հավալուսնների միջև կա սկիհի պատկեր: Սկիհը ծոպեր ունեցող ոսկեգույն ծածկոցով ծածկված սեղանիկ-պատվանդանի վրա է դրված: Սկիհը սքողված է կարմիր ցանցկեն ծածկոցով, որի եզրերը իջնում են սեղանի վրա: Այս սկիհն իր ձևով հիշեցնում է կաթոլիկ եկեղեցում տարածված կիբորիումը, որը նշխարը պահելու համար էր նախատեսված:

Որմնանկարչության մեջ հանդիպող տեսարաններից մեկը, որտեղ կա ծածկոցի պատկեր, Քոբայրի վանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու ավագ խորանի միջին շարքում Հաղորդության տեսարանն է: Տեսնում ենք զոհասեղանը՝ վրան Հաղորդության սկիհն ու հացը: Զոհասեղանի դիմացի կողմից կախված է խաչի պատկերով կարմիր ծածկոց: Քրիստոսի երկու կողմում ամբիոնները, որոնց մոտենում են առաքյալները, ծածկված են կենտրոնում խաչ ունեցող ծածկոցով: Դրանց ամբողջ մակերեսը ծածկված է հրեշտակներ հիշեցնող պատկերներով:

Հետաքրքիր է Կապադովկիայի Էսկի Գյումուշ կոչվող վանական համալիրի Համբարձման տեսարանը: Այս որմնանկարը կամ վանական համալիրը հայկական համարելու հարցը, իհարկե, մեր ուսումնասիրման շրջանակից դուրս է, սակայն տեսարանը ուշագրավ է, քանի որ հայկական գրեր ենք տեսնում: Որմնանկարի հեղինակը Միքայել հրեշտակապետի ձեռքի սրբիչի արձանագրությունն արտանկարել է եկեղեցուն նվիրաբերված գործվածքից: Հավատացյալները եկեղեցիներին նվիրում էին զանազան իրեր՝ իրենց հոգու փրկության համար: Ծածկոցների արձանագրությունները սովորաբար հիշատակագրային բնույթի են լինում և տեղեկություն են տալիս նվիրատուի մասին: Այս դեպքում գրությունը, հավանաբար, սաղմոսից հատված է[11]:

---

[11] **Մանուկյան Ս.,** Կապադովկիայի ժայռափոր մի եկեղեցու հայերեն նորահայտ արձանագրության շուրջ, «Էջմիածին» ամսագիր, 2023, Զ, էջ 66-67:

## ԳԼՈՒԽ 2
## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՍԿԻՀԻ ԾԱԾԿՈՑՆԵՐ

Այս գլխում ներկայացված են Հայաստանում ստեղծված ծածկոցները: Հայաստանը պատմության ընթացքում բազմիցս մասնատվել է, կորցրել տարածքային ամբողջականությունը, աշխարհագրական բաժանման համար հիմք ենք ընդունել Մովսես Խորենացու կազմած և հետագայում Անանիա Շիրակացու կողմից լրացված «Աշխարհացույցը»: «Արևմտյան Հայաստան» տերմինի մեջ ներառել ենք Մեծ և Փոքր Հայքերի տարածքները:

Սկիհի ծածկոցները խմբավորել ենք ըստ այն եկեղեցիների, որոնց նվիրաբերվել են: Այն դեպքերում, երբ հայտնի է ծածկոցների ստեղծման վայրը, դրանք խմբավորել ենք ըստ ստեղծման վայրի, քանի որ ավելի կարևոր է հաշվի առնել ոճական առանձնահատկությունները: Տվյալ աշխարհագրական տեղանքի մշակութային զարգացվածությունը պատկերացնելու համար ներկայացրել ենք հակիրճ պատմական ակնարկ: Նկարագրելով բնակավայրի սոցիալ-մշակութային կյանքը, եկեղեցիների քանակը, բնակիչների զբաղվածությունը, ավելի հստակ կպատկերացնենք ծածկոցի ստեղծման մշակութային նախադրյալները:

### 2.1 Արևմտյան Հայաստանում ստեղծված օրինակներ

Այս ենթագլխում ներկայացված են Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից հայտնի հայկական սկիհի ծածկոցներ՝ Մուշ, Վան, Կարս, Թոքատ, Արաբկիր, Ապուչեխ, Սեբաստիա, Կեսարիա: Այս ծածկոցները պահվում են տարբեր երկրների տարբեր թանգարաններում՝ Լեհաստանի Յագելոնյան թանգարան, Լոնդոնի Վիկտորիայի և Ալբերտի թանգարան, Վենետիկի Մխիթարյան միաբանության թանգարան, Էջմիածնի Գանձատուն-թանգարան, Նյու Յորքի Գրիգոր Մարգարյանի մասնավոր հավաքածու, Փարիզի Զարեհ Աշճյանի մասնավոր հավաքածու և այլն:

### 2.2 Արևելյան Հայաստանում ստեղծված օրինակներ

Այս ենթագլխում ներկայացված են Արևելյան Հայաստանի տարածքից հայտնի նմուշները՝ Էջմիածին, Երևան, Շիրակ, Ջավախք, Արցախ: Մեր կողմից ուսումնասիրված ծածկոցներից միայն երկուսի հեղինակն է հայտնի: Դրանցից մեկը Հարություն Ալեքսանյանի ասեղնագործած նմուշն է, որը նվիրվել է Երևանի Պողոս-Պետրոս եկեղեցուն: Ծածկոցը հարդարված է Տիրամոր թագադրման տեսարանով, որը բոլոր մանրամասներով կրկնում է Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Հովնաթան Հովնաթանյանի նույնանուն սրբապատկերը: Մյուսն Արցախի ասեղնագործական նմուշներից է, հեղինակը Մարգարիտ Ալեքսանյանն է, ով հմուտ ասեղնագործող էր, նաև նկարչուհի և գեղագիր:

Հայաստանյան ծածկոցները նույն հորինվածքն ունեն՝ նման են պատկերագրությամբ, ասեղնագործությամբ, արձանագրություններով, տարբերվում են գործվածքով, գույներով, կատարման վարպետությամբ:

## ԳԼՈՒԽ 3
## ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՍԿԻՀԻ ԾԱԾԿՈՑՆԵՐ

Մեր ուսումնասիրության ընթացքում տարբեր թանգարաններից և մասնավոր հավաքածուներից ի հայտ եկան բազմաթիվ սկիհի ծածկոցներ, որոնք ստեղծվել էին տարբեր երկրների հայաշատ կենտրոններում: Չնայած դրանք ստեղծվել են Հայաստանի տարածքից դուրս, միևնույնն է, հայերի ձեռքի աշխատանքներ են: Ոճական, տեխնիկական հատկանիշներով դրանք կրկնում են հայաստանյան ծածկոցները՝ բացառությամբ մի քանի նմուշների, որոնք ազդվել են տեղական ավանդույթներից:

### 3.1 Օսմանյան Կայսրության գաղթավայրերի օրինակներ

Այս ենթագլխում ներկայացված են Օսմանյան կայսրության հայաշատ բնակավայրերում ստեղծված սկիհի ծածկոցները՝ Տրապիզոն, Կիլիկյան Հայաստան, Քոնյա, Արմաշ, Իզմիր, Բուրսա, Կոստանդնուպոլիս, Մալղարա, Կրետե: Հատկապես բարձրարժեք են կոստանդնուպոլսյան աշխատանքները: Կիրառվեցին նոր տեխնիկաներ, որոնք չենք տեսնում մյուս տարածաշրջանների սկիհի ծածկոցներում՝ դաջազարդում, ստվարաթղթով կամ այլ ներդիր կտորով ասեղնագործություն: Պատկերագրական տարբերությունները ևս ակնհայտ են՝ նկատելի են աշխարհիկացման միտումներ: Պոլսի հայերը և մյուս ազգերը տիրապետում էին այն ժամանակ Եվրոպայում նորաձև համարվող ասեղնագործության բոլոր տեսակներին:

### 3.2 Այլ գաղթավայրերի օրինակներ

Այս ենթագլխում ներկայացված են Թբիլիսիում, Նոր Ջուղայում, Նոր Նախիջևանում, Ռումինիայում ստեղծված հայկական սկիհի ծածկոցները:

Ընդհանուր առմամբ գաղթավայրերում ստեղծված նմուշներն ունեն պատկերագրական նույն առանձնահատկությունները, տարբերվում են հայաստանյան օրինակներից կատարման ձևով, ասեղնագործության տեսակներով, գործվածքներով:

## ԳԼՈՒԽ 4.
## ԱՆՀԱՅՏ ԾԱԳՄԱՆ ՍԿԻՀԻ ԾԱԾԿՈՑՆԵՐ

Այս գլխի մեջ ընդգրկված են այն սկիհի ծածկոցները, որոնց ստեղծման մասին տեղեկություններ չունենք: Այն ծածկոցները, որոնք չունեն արձանագրություն, հետևաբար հայտնի չեն ո՛չ ստեղծման վայրը, ո՛չ թվականը, ներկայացրել ենք ըստ թանգարանային հավաքածուների:

Արձանագրություն ունեցող ծածկոցների դեպքում, եթե հայտնի է ստեղծման թվականը, ներկայացրել ենք ժամանակագրական հաջորդականությամբ:

### 4.1.Հայաստանյան թանգարաններում պահվող օրինակներ

Այս ենթագլխում ներկայացված են Էջմիածնի թանգարաններում, Հայաստանի պատմության թանգարանում, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում, Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարանում պահվող սկիհի ծածկոցները: Ցավոք, թանգարանային անձնագրերը բավականաչափ տեղեկություն չեն պարունակում այս իրերի մասին և ստեղծման վայրը կարելի է ենթադրել միայն ոճական առանձնահատկություններից ելնելով:

### 4.2. Արտերկրի թանգարաններում և հավաքածուներում պահվող օրինակներ

Այս ենթագլխում Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության թանգարաններում, Ռումինիայի Հայոց պատրիարքարանի Դուդյան թանգարանում, Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության թանգարանում, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի Հովհաննես Կոլոտ Պատրիարքի անվան թանգարանում, Երուսաղեմի Հայոց Պատրարքարանում, Վաշինգտոն քաղաքի Ջորջ Վաշինգտոնի համալսարանի Տեքստիլի թանգարանում, Բոստոնի Հարվարդի համալսարանի Արթուր Սաքլեր թանգարանում, Թեսալոնիկի Գալֆայան հավաքածուում, Փարիզի Քրիստին և Ալբերտ Աշճյան հավաքածուում, Գրիգոր Մարգարյանի մասնավոր հավաքածուում պահվող սկիհի ծածկոցներն են: Այս ենթագլխի նմուշների մեծ մասը չունի արձանագրություններ:

## ԳԼՈՒԽ 5. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սկիհի ծածկոցների պատկերագրական առանձնահատկություններից զատ կարևոր է ուսումնասիրել դրանց արձանագրությունները և ասեղնագործության տեսակները: Արձանագրությունները հնարավորություն են տալիս մեզ որոշելու, թե որ աշխարհագրական տեղանքի և որ դարի աշխատանք են դրանք: Ասեղնագործության տեսակները, որոնք բնորոշ են կոնկրետ տարածաշրջանի, նույնպես հուշում են ծածկոցի ծագման մասին: Բացի այդ, սկիհի ծածկոցներից բազմաթիվ նմուշներ ունենք, որոնց գեղարվեստական արժեքն ավելի շատ ասեղնագործությունն է, քան պատկերագրությունը:

## 5.1 Արձանագրությունները

Այս ենթագլխում ներկայացրել ենք արձանագրությունների տեսակները, բովանդակությունը: Դրանց միջոցով բացահայտում ենք հավատացյալ հայ ժողովրդի համոզմունքները և աստվածավախությունը:

Սկիհի ծածկոցների արձանագրություններն իրենց բովանդակությամբ կարող ենք համարել հիշատակագրային, որոշ առումներով նաև նվիրատվական: Հիշատակագրային են կոչվում այն արձանագրությունները, որոնցում հիշատակվում են հանգուցյալի հակիրճ տվյալները՝ ազգանուն-անունը, տոհմային պատկանելությունը, մասնագիտությունը կամ զբաղվածությունը, հասարակության մեջ ունեցած դիրքը, պաշտոնը: Նվիրատվական արձանագրություններն ի հայտ են եկել Ժ. դարի կեսերից: Ըստ արձանագրության դասավորվածության՝ ծածկոցները կարող ենք մի քանի խմբի բաժանել: Արձանագրությունները ծածկոցների վրա ասեղնագործվում էին ամենակարևոր հատվածում՝ *կենտրոնում*, որը սովորաբար առանձնացված էր լինում, նաև եզրային մասում, կարող էին դասավորվել և՛ շրջանաձև, և՛ ուղղանկյուն: Կենտրոնական ընդգծված այս հատվածը առանձնացված էր սկիհի չափերին համապատասխան: Կարելի է ասել, որ արձանագրությունը երևացող տեղում էր ասեղնագործվում: Կախված իր ունեցած դասավորությունից՝ արձանագրությունը կարող էր լրացնել ծածկոցի հարդարանքը ՝ դառնալով հորինվածքի կարևոր, անբաժան մաս: Տեղի սակավության պատճառով օգտագործում էին մի քանի հնարքներ՝ համառոտագրություն, կցագրություն: Կիրառվել են փակագրեր, բարբառային բառեր, փոխառություններ օտար լեզուներից, հատկապես՝ թուրքերենից:

## 5.2 Ասեղնագործության նյութերը և տեսակները

Այս ենթագլխում ներկայացրել ենք ասեղնագործության տեսակները և օգտագործվող նյութերը, լուսաբանել ենք մի քանի տերմինների սխալ կիրառությունը: Սկիհի ծածկոցները, ըստ էության, տեքստիլի նմուշներ են: Տեքստիլը, սակայն, օտարածին բառ է, որը փոխառված է եվրոպական լեզուներից: Հին կամ միջնադարյան հայերենում կան դրան փոխարինող ավելի ստույգ և, ամենակարևորը, հայկական մի քանի բառեր, օրինակ՝ *անկուած, անկուածոյ:* Ծածկոցները կարող էին լինել կտավից, մետաքսից, թավշից, թանզիֆից, ատլասից, հարդարվում էին մարգարիտներով, փուլերով, ասեղնագործվում էին ոսկեթելով, արծաթաթելով, մետաքսե թելերով, կլապիտոնով, կանիտելով: Ասեղնագործության տեսակները հիմնականում հայկական էին՝ Ուրֆայի երկկողմանի ասեղնագործություն, Վան-Վասպուրականի կար, Այնթապի թելքաշ ասեղնագործություն, հարթակար, շղթայակար, սուզանի, հանգուցակար, ասեղնագործ ժանյակ և այլն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը, կարող ենք անել մի քանի կարևոր եզրակացություն.

1. Սկիհի ծածկոցները եկեղեցում Պատարագի ժամանակ սկիհը և մաղզման ծածկելու համար են նախատեսված: Ինչպես եկեղեցում կիրառվող մյուս սպասքը և իրերը, սկիհի ծածկոցները ևս քահանայի կողմից օրհնվում են մինչև կիրառվելը: Որոշները պարզ օրհնությամբ՝ աղոթքի ընթերցումով, որոշներներն էլ սրբագործվում են ջրով և գինով: Եկեղեցու սպասավորն իրավունք չուներ կենցաղային օգտագործման գործվածքով ծածկելու սկիհը, քանի որ այդ գործվածքը դիպչելու էր սրբազան մասունքներին՝ գինուն և նշխարին:
2. Քրիստոնեական աշխարհում սկիհի ծածկոցների պահպանված վաղագույն օրինակները բյուզանդական են՝ արդեն ձևավորված պատկերագրությամբ, վերաբերում են ԺԳ. դարասկզբին: Բյուզանդական շրջանում ծածկոցները կիրառվում էին սկիհը և մաղզման ծածկելու համար: Այս շրջանի ծածկոցների հարդարանքի հիմնական թեման առաքյալների հաղորդությունն էր:
3. Ուղղափառ եկեղեցու պահպանված վաղագույն նմուշները վերաբերում են ԺԴ. դարավերջին, ավելի մեծ են չափերով, ավելի հարուստ են պատկերներով:
4. Հայ Առաքելական եկեղեցու պահպանված վաղագույն օրինակները ԺԷ. դարի են: Արդեն Ը. դարում քահանայի պարտականությունների մեջ էր Սուրբ իրերը և մասունքները ծածկելը: Սկիհը Պատարագի ժամանակ ծածկելու մասին հիշատակություն ենք հանդիպում նաև ԺԲ. դարում՝ Ներսես Լամբրոնացու մոտ:
5. Մեզ մատչելի նյութի քննությունը թույլ է տալիս հայ եկեղեցու սկիհի ծածկոցները խմբավորել ըստ **հարդարանքի** և առանձնացնել 3 հիմնական խումբ:

ա) Առաջին խումբը *սյուժետային* տեսարաններ ունեցող ծածկոցներն են,

բ) Երկրորդ խմբում հարդարանքի հիմնական մասը *խորհրդանշաններն* են՝ զուգորդված բուսաձաղկային հարդարանքով:

գ) Երրորդ խումբը այսպես կոչված *խառը* խումբն է, երբ ծածկոցը հարդարված է միաժամանակ սյուժետային տեսարաններով, խորհրդանշաններով, բուսական զարդաձևերով, հազվադեպ նաև թռչուններով:

6. Ծածկոցների հարդարանքին բնորոշ է կենտրոնամետ հորինվածքը: Կենտրոնում սովորաբար ճաճանչապսակ է, որի մեջ Արևի, Խաչի, Սկիհի, Սերովբեի, Աստծո Գառան, Քրիստոսի պատկերներ, Խաչելության կամ Հարության տեսարաններ էին ասեղնագործվում: Կենտրոնամետ այս դասավորությունն ուներ հետաքրքիր խորհուրդ: Կենտրոնական հատվածում Քրիստոսն էր, ով լույս էր ճառագում: Քրիստոսը կամ իր խորհրդանիշերը

կյանքի ակունք էին, կենարար լույս: Սովորաբար ճաճանչներից հետո սերովբեներ, քերովբեներ և հրեշտակներ էին ասեղնագործվում, որոնք միջնորդ էին Աստծո և մարդկանց միջև: Հրեշտակների դասից բացի ասեղնագործված են Առաքյալները, Քրիստոսի կյանքին վերաբերող տեսարաններ՝ Ավետում, Ծնունդ, Մոգերի երկրպագություն, Խորհրդավոր ընթրիք, Խաչելություն, Հարություն, Հոգեգալուստ, որոշ ուշ օրինակների վրա նաև Տիրամոր Վերափոխման տեսարանը: Նմանատիպ կենտրոնամետ դասավորության մեջ տեսնում ենք *Երկնային քահանայապետության և աշխարհի, տիեզերքի պատկերում:* Կան այս ընդհանուր կանոններից դուրս այլ ծածկոցներ ևս, օրինակ Մշո Սբ. Կարապետ վանքին նվիրաբերված Տիրամոր Օդիգիդրիա պատկերագրությամբ ծածկոցը:

7. Սկիհի ծածկոցների կատարման վարպետությունը, պատկերագրական ոճը, օգտագործվող նյութերի որակը անմիջականորեն կապված էին ծածկոցի ծագման վայրի հետ: Զարգացած հայաշատ կենտրոնների՝ Կոստանդնուպոլսի, Բուրսայի, Իզմիրի, Կեսարիայի և այլ վայրերի ծածկոցների հարդարանքում տեսնում ենք արևմտյան պատկերագրական կանոնների ազդեցությունը, որը ներթափանցել էր տպագիր գրականության միջոցով:
8. Ծածկոցների գեղարվեստական հարդարանքի քննությունից պարզ է դառնում, որ որոշները տնայնագործ վարպետների աշխատանքներ էին, ովքեր ձեռքի տակ եղած գործվածքով և թելերով էին ասեղնագործում: Մյուս նմուշները համքարությունների, զանազան միսսիոներական կազմակերպությունների անդամների կամ եկեղեցուն կից դպրոցների սաների աշխատանքներ էին, ովքեր ստեղծում էին բարձրակարգ աշխատանքներ:
9. Ծածկոցների հարդարանքը կապ ուներ ծածկոցի կիրառման կամ գործառույթների հետ: Հետաքրքիր է, որ սյուժետային հարդարանք չունեցող սկիհի ծածկոցները ունեցել են մի քանի գործառույթ՝ որպես ծածկոց-տակդիր, շուշփա և այլն:
10. Քննելով սկիհի ծածկոցների արձանագրությունները, կարելի է եզրակացնել, որ դրանք նվերներ էին հավատացյալների կողմից: Դեռևս Սուրբ Սահակի կանոններից տեղեկանում ենք, որ եկեղեցուն զանազան գանձեր և հարստություններ նվիրելու սովորույթ է եղել՝ ընտանիքի անդամների հոգու փրկության համար: Իրենց բովանդակությամբ սկիհի ծածկոցների արձանագրությունները կարող ենք համարել *նվիրատվական*, որոշ վերապահումով նաև *հիշատակագրային*: Արձանագրությունում օգտագործվող տառատեսակը երկաթագիրն էր: Տեղի տնտեսման համար ընդունված էր օգտագործել համառոտագրություններ և կցագրություններ:
11. Ըստ **գրության առկայության** ծածկոցները լինում են՝

ա) արձանագիր, բ) առանց արձանագրության:

12. Ըստ **ձևի** կարող ենք առանձնացնել.
ա) կլոր, բ) օվալաձև, գ) քառակուսի, դ) ուղղանկյուն սկիհի ծածկոցներ:
13. Գործվածքը, որի վրա ասեղնագործված են զանազան տեսարաններ, բամբակից, բրդից, մետաքսից, ատլասից, թանզիֆից և թավիշից են: Շնորհիվ զարգացած արհեստագործությանը՝ գործվածքների մեծ մասը տեղական են:
14. Օգտագործված են մետաքսե, բրդե, բամբակե թելեր, արծաթաթել և ոսկեթել: Հարդարանքի մեջ տեսնում ենք փուլեր, մարգարիտներ, կլապիտոն, կանիտել:
15. Տարածված ասեղնագործություններից էին հարթակարը, սուզանին, Այնթապի, Ուրֆայի, Վանի ասեղնագործությունները, հանգուցակարերը, ասեղնագործ ժանյակը:
16. Սկիհի ծածկոցներն իրենց հորինվածքով հայ արվեստի մի ուրույն մաս են կազմում, արձանագրությունները՝ ազգագրության մաս, իսկ ասեղնագործական հարդարանքը՝ դեկորատիվ-կիրառական արվեստի մաս:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


1. **Օնանյան Ա.,** Եկեղեցու ասեղնագործ ծիսական ծածկոցները, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 1.3 (26), Երևան, 2018, էջ 221-229:
2. **Օնանյան Ա.,** Մխիթարյան Միաբանության սկիհի ծածկոցները, «Էջմիածին», Էջմիածին, 2019, Ա, էջ 132-139:
3. **Օնանյան Ա.,** Սկիհի արձանագրուած ծածկոցներ, Հայկազեան հանդէս, Հալէպ, 2020, թիվ 40, էջ 439-450:
4. **Օնանյան Ա.,** Ակնարկ մի քանի հայկական ծածկոցների և Օսմանյան տեքստիլի մասին, Բանբեր Մատենադարանի 31, Երևան, 2021, էջ 231-239:
5. **Օնանյան Ա.,** Մշո Սուրբ Կարապետ վանքին նվիրաբերված սկիհի ծածկոցների պատկերագրությունը, Բանբեր Մատենադարանի 32, Երևան, 2021, էջ 247-266:
6. **Onanyan A.,** The Iconography of the Hierarchy of Angels on the Armenian Chalice Veils, Review of Armenian Studies, 2021, N3 (27), Yerevan, NAS RA "Gitutyun", pp. 108-119.
7. **Օնանյան Ա.,** Մալղարայի հայկական Սբ. Թորոս եկեղեցու գույքի հետագա ճակատագիրը, «Էջմիածին», Էջմիածին, 2023, Զ, էջ 95-105:

## ОНАНЯН АННА СЕРГЕЕВНА
## ИКОНОГРАФИЧЕСКИЕ И ОРНАМЕНТАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ПОКРОВОВ
## РЕЗЮМЕ

**Актуальность темы.** Актуальность темы обусловлена тем, что покровы потиров (воздух) связаны сразу с несколькими сферами культуры – верование армянского народа, декоративно-прикладное искусство, эпиграфика. Покровы потиров являются основной частью литургии и как другая церковная утварь, они благословляются перед употреблением. Художественное оформление покровов - религиозные сюжеты или религиозные символы, редко цветочный и архитектурный орнамент, птицы.

**Основной целью** диссертации является всестороннее изучение и искусствоведческий анализ художественного оформления армянских покровов, в том числе иконографии, надписей, вышивки.

**Научная новизна работы.** Впервые сделана попытка всесторонне представить покровы не только как произведения декоративно - прикладного искусства, но и как памятники источниковедения и как церковная утварь. Для изучения покровов мы нашли экземпляры со всего мира – в разных музеях и в частных коллекциях. Так же была изучена литература про церковную утварь, в частности, первые письменные свидетельства о покровов. Для всестороннего изучения мы сравнили армянские покровы с католическими и православными примерамы. Армянские покровы разделены на географические территории. Диссертация основана на изучении поразносторонних исследований на родном и иностранных языках, в том числе и научных статей, с использованием описательного, иконографического, стилистического, сравнительного, источниковедческого, эпиграфического и технико-технологического методов.

**Теоретическое и практическое значение диссертации.** В этой диссертации представлены доступные нам примеры покровов, а остальная часть не дошло до нас по разным причинам – нападения врагов, ограбления церквей. Эта диссертация является попыткой собрать доступные нам экземпляры. Не существует отдельной целостной работы, посвященной художественному оформлению покровов. Результаты проведенных нами исследований могут стать указателем для искусствоведов и иных исследователей, которые изучают иконографию и, конечно, другие виды церковного текстиля.

**Структура диссертации.** Диссертация состоит из введения, пяти глав - с соответствующими подглавами, выводов, списка использованной литературы, а также приложения. В приложении представлены репродукции покровов и соответственно, список репродукции.

**Глава 1** - «Ритуальные покровы и их использование» состоит из трех подглав, в которых рассмотрены виды церковной утвари, особенно покровов, первые дошедшие до нас примеры и их оформления, изображения покровов в армянском и зарубежном искусстве. Также рассмотрены виды покровов армянской Апостольской, Католической и Православной церкви, их различия и сходства.

**Глава 2** - «Покровы Армении» состоит из двух подглав, в которых на основе описательного метода рассматриваются примеры покровов, созданные в Армении. В первой подглаве представлены примеры покровов из Западной Армении, а во второй подглаве - из Восточной Армении. В конце второй главы представлен краткий обзор иконогрфических групп покровов. Первая группа покровов оформлена религиозными сюжетамы, вторая группа- религиозными символамы и орнаментом, а третья группа- смешанная группа, где оформление покровов состоит одновременно из религиозных символов и сюжетов, а также орнаментов.

**Глава 3** - «Покровы из армянских колоний» состоит из двух подглав. Здесь представлены покровы, созданные в местностях, населенных большим количеством армян - Османская империя, Иран, Румыния и т. д. Несмотря на то, что покровы созданы за пределами Армении, они имеют одно и то же оформление и иконографический стиль.

**Глава 4** - «Покровы неизвестного происхождения» представляет ряд покровов, место создания которых нам неизвестна. Так как большинство из них не имеет надписей и датировки, мы представили их по коллекциям армянских и зарубежных музеев - Музей истории Армении, Музей народного искусства Армении, Музей Дудян в Прелатстве Армянской епархии в Бухаресте, музей конгрегации Мхитаристов в Венеции и Вене и т.д., а также в частных коллекциях в Нью Йорке, Париже, Афинах, Салониках.

**Глава 5** - «Надписи, материалы и вышивка покровов» состоит из двух подглав. В первой подглаве представлены типы и содержания надписей. Надписи имеют важное источниковедческое значение, так как в них читаем имена церквей и местностях, которые уже не существуют или превратились в руины. Во второй подглаве представлены материалы покровцов - текстиль из льна, шелка, ваты, бархата, марли, атласа, а также представлены разные техники вышивания- вышивка Урфы, Айнтапа, Вана, гладь, золотое и серебряное шитье, тамбурный шов, аппликации - жемчуг, блестки, канитель, клапитон, нитки- хлопковые, шелковые и т.д. Результаты работы обобщены в разделе «Выводы».

**ANNA ONANYAN**

## Chalice Cover's Iconographic and Ornamental Features

**Relevance of the topic** is conditioned by the relation to the different sciences: fait, applied arts and crafts, epigraphy. Chalice Covers are the main part of the Liturgy and, like other Church utensils, they are blessed before use. The decoration of the Chalice Covers contains religious subjects or religious symbols, rarely floral and architectural ornaments, birds.

**The main purpose** of the thesis is the comprehensive study and analysis of the artistic decoration of Armenian Chalice Covers, especially their iconography, epigraphy, embroidery.

**Novelty of the thesis:** Armenian art historians are always interested by Armenian miniature, sculpture, wall painting, partially by applied arts and crafts. Chalice Covers, such as others church covers and textile are not well studied. Novelty of the thesis is the study of Chalice Covers as a part of applied arts and crafts. Chalice Covers have not been studied with such inclusion and questioning before. The thesis is based on various and multilingual studies and scientific articles. Particularly descriptive, iconographic, stylistic, parallel comparative, source-based, techno-technological methods have been used.

The sources of the study are different. First source is examples of Chalice Covers which reached us at XVI-XX centuries. Second are written sources which contain information about the origin and the use of the Chalice Covers. Third are Medieval art monuments where may be represented examples of the Chalice Covers or theirs prototypes.

**The theoretical and practical significance of the thesis:** This dissertation presents examples of Chalice Covers available to us, and the rest has not reached us for various reasons – attacks by enemies, robberies of Churches. This dissertation is an attempt to collect the copies available to us.There is no separate complete work on the artistic decoration of Armenian Chalice Covers. The results of this thesis will complement not only the history and theory of Armenian art as a material for new courses, but also the pages of ethnography, epigraphy, religion.

**The structure of the thesis:** The thesis consists of an introduction, five chapters, corresponding subchapters and conclusions. The thesis is followed by a list of literature, as well as a list of websites and appendix. The appendix contains reproductions of the Chalice Covers and a list of reproductions.

**Chapter I. "The types and use of Chalice Covers"**, consists of three subchapters, where we present the types of church utensils as well as covers, their origin and use. We present also the illustrations of Chalice Covers in Armenian and foreign wall painting and miniature. And finally, we describe the types of Armenian Church Covers.

**Chapter II. "Armenian Chalice Covers",** consists of two subchapters, which show, in a descriptive way, Chalice Covers made in Oriental and Occidental Armenia. At the end of the second chapter, a brief overview of the iconographic groups of the Chalice Covers presented. The first group of Covers is decorated with religious subjects, the second group is decorated with religious symbols and ornaments, and the third group is a mixed group, where the design of Covers consists of religious symbols and subjects, as well as ornaments in parallel.

**Chapter III. "Chalice Covers made in Armenian colonies"**, consists of two subchapters. First subchapter represents examples made in Ottoman Empire's Armenian colonies. Second subchapter represents examples of Romania, Georgia, Iran and other countries. Despite the fact that the Chalice Covers were created outside of Armenia, they have the same design and iconographic style.

**Chapter IV. "Chalice Covers with unknown origin".** Examples of this group have no inscriptions and dating, that is why we represent this group by the museum collections. First subchapter represents examples of Armenian museums: History Museum of Armenia, Museum of Mother Cathedral and Treasury-museum of Holy Ejmiatsin, Sardarapat National Ethnographic Museum, Hovhannes Sharambeyan Museum of Folk Arts. Second subchapter represents examples of foreign museums: The Mekhitarist Congregation's museums in Vienna and Venice, Dudyan museum of Armenian Diocese of Romania, The Cilicia museum in Anthelias, Patriarch Hovhannes Colod collection of Armenian Patriarchate of Turkey, Museum of Armenian Patriarchate of Jerusalem, the George Washington University and Textile Museum, Arthur M. Sacler Museum (Harvard University, Boston), Albert and Christine Achdjian's museum in Paris, Private collection Krikor Markarian in New York. Almost all in this group have no inscription.

**Chapter V. – "Chalice Cover's inscriptions, materials and embroidery"** consists of two subchapters. First subchapter represents the types and contents of inscriptions. They have historical importance, because they contain the names of churches and cities, which do not exist or which lie in ruins. Second subchapter represents Chalice Cover's materials: textiles made of linen, silk, cotton wool, velvet, gauze, satin, and also different embroidery techniques are presented – embroideries of Van, Aintab, Urfa (Ourfa), satin stitch embroidery, gold and silver embroidery, chain stitch, applications- pearls, sequins, cannetille, "klapiton", cotton, silk threads etc.

The results of the work are summarized in the "Conclusions" section.